

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԵԼԼԱ ՍԻՍԵՄՍ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ, ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ, ՌԱՆՉՊԱՐ ԳՅՈՒՂԻ ՆՈՐ
ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԶԱՐԴԻՉ-
ԿՈՏՈՐԱԿԻՉ ԿԱՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

Պատվիրատու՝ «ՀԵԼԼԱ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ

Տնօրեն՝

Արայիկ Աղաբաբյան

Կատարող՝ «Յուլի-Դալի» ՍՊԸ

Տնօրեն՝

Լիլիթ Փաշինյան

Երևան 2024

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

.....	6
1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	7
1.1 Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը	13
1.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (ՇՄԱԳ) օրենքը	14
1.3 Հողային օրենսգիրք	18
1.4 Թափոնների մասին օրենք	18
1.5 Բնապահպանական վերահսկողության մասին օրենք	19
1.6 Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք	19
1.7 Պատմական և մշակութի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք	20
1.8 Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք	21
1.9. Բուսական աշխարհի մասին օրենք	22
1.10. Կենդանական աշխարհի մասին օրենք	23
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24
2.1. Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը	24
2.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	24
2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը	24
2.3.1. Ջարդիչ կայան	24
2.3.2. Նախագծի այլընտրանքները	28
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	30
3.1. Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	30
3.2. Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ	31
3.3. Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	32
3.4. Բանեցված դողածածկեր	32
3.5. Կենցաղային աղբ	33
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	34
4.1. Գտնվելու վայրը	34
5. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	54

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	64
6.1. Ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ առաջացած Փոշու հաշվարկը	64
6.2. Բարձրագույն աշխատանքների ժամանակ առաջացող փոշու հաշվարկը	66
6.3. Ավտոմեքենայի բեռնաթափում.	67
6.4. Ջարդիչ կայանքի ադդեցություն շրջակա միջավայրի վրա	68
6.4.1. Ադդեցություն մթնոլորտային օդի որակի վրա	68
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ	71
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	76
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	79
Օգտագործված գրականության ցանկ	81

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՇԵԼԼԱ ՍԻՍԵՄՍ» ՍՊ ընկերությունը նախատեսում է Արարատի մարզի, Մասիս համայնքի, Ռանչպար գյուղի Նոր Թաղամաս 1-ին փողոց 18 հասցեում կառուցել ջարդիչ-կոտորակիչ կայան՝ տարեկան 480000մ³ արտադրողականությամբ: Ընկերությունը ավագակոպճային խառնուրդ, բազալտ, անդեզիտաբազալտ օգտակար հանածոներից նախատեսում է ստանալ խիճ և ավազ: Հումքը ձեռք է բերվելու այլ ընկերություններից՝ պայմանագրային հիմունքներով: Տեղամասը գտնվում է Ռանչպար գյուղից մոտ 1100մ հեռավորության վրա՝ Ռանչպար-Արաքս ասֆալտապատ ճանապարհի հարևանությամբ: Տեղամասից մոտ 420մ հեռավորության վրա անցնում է Սև Ջուր (Մեծամոր) գետը: Ընկերությունը նախատեսում է տեխնիկական կարիքների համար ջուրը վերցնել Սև Ջուր գետից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից Ջրօգտագործման թույլտվության ստացումից հետո:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» օրենքի համաձայն նախատեսվող գործունեությունը պատկանում է «Ա» կատեգորիային և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Նախատեսվող ջարդիչ կոտորակիչ կայանը կառուցվելու է Ռանչպար գյուղի վարչական տարածքում՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողամասի վրա:

1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԻՄՔԵՐԸ

Նախնական գնահատման հայտի (Այսուհետ՝ Հայտ) նպատակն է ներկայացնել նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և

մարդու առողջության վրա հնարավոր նախնական փոփոխություններն ու առաջարկել դրանց մեղման կամ չեզոքացման միջոցառումների պլան: Հայտը կազմելիս ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը, օգտագործվել են բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների ինչպես նաև մեթոդական ցուցումների դրույթներն ու կարգավորումները:

Հայտի կազմը և բովանդակությունը համապատասխանում է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքին:

Հայտը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնվել ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) և շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ՀՀ Միջազգային պարտավորություններով ստանձնած պահանջները:

Հայտը կազմելիս օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

Կլիմայական պայմանների, ջրաբանության, հողային ռեսուրսների, կենդանական և բուսական աշխարհի, պատմամշակութային և բնական հուշարձանների, համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների վերաբերյալ առկա հրատարակված կամ ինտերնետ հասանելիություն ունեցող աղբյուրներ՝ հոդվածներ, հաշվետվություններ, թեմատիկ վերլուծություններ, թեմատիկ քարտեզներ, սխեմաներ և այլն:

Շրջանում կատարված այցելությունների, հարցումների և հետազոտությունների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը,

Նախագծի շահագրգիռ կողմերի հետ իրականացված բանակցություններն ու քննարկումները:

Հայտը կազմվել է «ՀԵԼԼԱ ՄԻՍԵՄՍ» ՍՊ ընկերության սեփական միջոցներով և ներկայացվում է օրենքով սահմանված փորձաքննության:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <Ա> կատեգորիային և ենթակա է փորձաքննության՝ երկու փուլով:

Հայտի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել, նախնական բոլոր հնարավոր ուղղակի և անուղղակի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, որոնք առաջանալու են ՀՀ Արարատի մարզի, Մասիս

համայնքի, Ռանչպար գյուղում իրականացվելիք ջարդիչ կայանի կառուցման աշխատանքների արդյունքում:

Մշակվել է համապատասխան միջոցառումների ծրագիր, որով հնարավորինս կանխվելու է վնասակար ազդեցությունները:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում խստագույնս հետևելու է օրենսդրական գործիքակազմին, որոնք կարգավորվում են ՀՀ - ում 1991 թ.-ից մինչև այժմ ընդունված բազմաթիվ օրենսգրքերի, օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և կանոնակարգերի միջոցով:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների և օրենսգրքերի ցանկը ներկայացված է ստորև.

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.) կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ

օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

▪ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ - 150, 3.05.2023թ) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրասահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

▪ ՀՀ Կառավարության 20.01.2005 թ.-ի թիվ 64-Ն որոշում, որով սահմանվել է ջրակերհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

▪ ՀՀ Կառավարության 01.18.2007 թ. Թիվ 205-Ն որոշում

▪ ՀՀ Կառավարության 30.05.2002թ. թիվ 927-Ն որոշում:

▪ ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

▪ ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

▪ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման,

անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը

- Աշխատանքների ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշումը

- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերք-օգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,

- «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ

կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 02.11.2017թ N 1404 -Ն որոշում:

- «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության 18.08.2021թ. N 1352-Ն որոշում,
- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում
- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 07.01.2022թ., N6-Ն Հրաման:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25 հոկտեմբեր 2022թ N369-Ն Հրաման:

Միջազգային համաձայնագրեր.

1. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
2. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
3. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
4. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
5. Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
6. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ)

8. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
9. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
10. «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ)
(վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)
11. «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել.)

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Նախաձեռնողի՝ անվանումը և գտնվելու վայրը

Նախաձեռնող. «ՀԵԼԼԱ ՍԻՍԵՄՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՄՊԸ)
Գրանցման համար՝ 83.110.1303153
Գտնվելու վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր, Տերյան փ. Տ. 79, հեռ. +37498841068
Տնօրեն՝ Արայիկ Ռազմիկի Աղաբաբյան
Նաղնական գնահատման հայտը կազմեց՝ «ՅՈՒԼԻ ԴԱԼԻ» ՄՊԸ տնօրեն Լիլիթ Փաշինյանը:

2.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

«ՀԵԼԼԱ ՍԻՍԵՄՍ» ՄՊ Ընկերությունը նախատեսում է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Ռանչպար բնակավայրում կառուցել ջարդիչ տեսակավորող կայան՝ օգտակար հանածոներից (ավազակոպճային խառնուրդ, բազալտ, անդեզիտաբազալտ) խիճ և ավազ ստանալու համար: Օգտակար հանածոները ձեռք են բերվելու պայմանագրային հիմունքներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը

2.3.1. Ջարդիչ կայան

Ջարդիչ կայանը նախատեսվում է կառուցել ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի, Ռանչպար բնակավայրում (նկ.1,2):

Աշխատանքային պրոցեսը բաղկացած է մի քանի փուլերից՝ առաջնային մշակում, երկրորդական մանրացում և ստացված նյութի համապատասխան տեսակավորում (ըստ տարբեր չափերի):

Արտադրության փուլեր.

I-ին քայլ՝ հումքը տեղափոխվում է հատուկ այդ նպատակով նախատեսված բունկեր, որը կարգավորում է առաջնային ջարդիչի մատակարարման աշխատանքը:

II-րդ քայլ՝ առաջնային ջարդիչից հետո ստացված հումքի տեղափոխումն է երկրորդային ջարդիչ՝ ավելի մանր ֆրակցիա ստանալու համար:

Մանրացված հումքի մշակման III-րդ փուլը ներառում է պատրաստի հումքի մատակարարում կամ պահեստավորում՝ ըստ ապրանքի տեսակի և չափերի:

Արդյունահանված օգտակար հանածոն /հանքանյութը/ բեռնատարերով տեղափոխվում է հումքի բաց պահեստ կամ խոշոր ջարդման ընդունիչ բունկեր: Նոր ճանապարհների կառուցում նախատեսված չէ:

Պահեստից կամ բունկերից քարի հումքը տալիս են խոշոր ջարդման այտավոր ջարդիչ: Այնուհետև խոշոր ջարդումից հետո հումքը ժապավենային փոխակրիչով տեղափոխվում է քարմաղման:

Քարմաղման արդյունքում ստանում են 4 դասի ֆրակցիաներ՝ - 5մմ, +5 -20 մմ, +20 -25մմ և 25մմ և ավել խոշորությամբ:

Առաջի 3 ֆրակցիաները համարվում են պատրաստի արտադրանք և վաճառվում են կամ կուտակվում պատրաստի արտադրանքի բաց պահեստներում:

+25մմ դասը ժապավենային փոխակրիչով տրվում են ջարդման 2-փուլ՝ ռոտորային ջարդիչում: Ռոտորային ջարդիչից հետո մանրացված քարը տրվում է քարմաղ, որի արդյունքում ստանում են տարբեր չափսերի խիճ:

Խճաքարի չափսերը և ելքերը կարող են փոփոխվել կախված սպառողների պահանջներից՝ քարմաղերում պահանջվող չափսի մաղերի տեղադրմամբ:

Համաձայն տեխնոլոգիական սխեմայի երկրորդ փուլում տեղադրված քարմաղը կարող է կրել նաև ստուգողական քարմաղի դեր: Երբ մանր ֆրակցիաների պահանջարկը ավելանում է, երկրորդ քարմաղման վերին դասը վերադարձվում է ռոտորային ջարդիչ լրաջարդման:

Արտադրամասում բոլոր սարքավորումները շարժական են և տեղադրվել են բացօթյա:

Նախատեսվող գործունեության իրականացման համար ընկերությունը օգտագործելու է PARS մակնիշի ջարդիչ:

Ջարդիչ PARS -ը, դա մանրացնող համակողմանի (ունիվերսալ) մեխանիզմ է, որը կիրառվում է ցանկացած ամրության ապարներ մանրացնելու համար: Մանրացումը կատարվում է երկու այտավոր ջարդիչների միջոցով՝ խոշոր և միջին, եզակի դեպքերում առավել մանր մասնիկավոր նյութերի մանրացման համար:

PARS տիպի ջարդիչը՝ այս տեսակի մեխանիզմներից ամենահուսալիներից մեկն է և առավելությունը կայանում է վերջնական նյութի մասնիկների մեծությունը սահմանելու հնարավորության մեջ:

Ջարդիչի առանձնահատկություններից է նաև բարձր ամրության և հղկամաշունակության կավային նյութեր (ինչպես չոր, այնպես էլ խոնավ) մանրացնելու ունակությունը (սեղման ամրության սահմանը մինչև 2200 կգ/սմ²):

PARS այտավոր ջարդիչի հիմնական տարրերն են՝ շրջանակ, մանրացնող վահաններ, կողային աղյուսապատում, շարժվող այտ, գլխավոր առանցք, փոկանիվ, արտակենտրոնակային լիսեռ, կարգավորիչ սալիկ, փակող զսպանակ, հենակ, ամրացնող սարք, պահանգային թիթեղներ, շարժաձող, պաշտպանիչ պահանգ:

Ջարդիչի տեխնիկական պարամետրերը բերված են աղ.-ում

Ջարդիչի մոդել	PARS BNS 240
Տիպաչափս	1200x1510
Մասնիկի առավելագույն չափս	300 մմ
Բեռնաթափման ճեղքի լայնություն	40-90մմ
Արտադրողականություն	150-200 մ ³ /ժ
Շարժիչի հզորություն	200-250 կՎտ
Զանգված	21 տ
Եզրաչափերն առանց հաղորդակի LxBxH	1.6x2.5x2.2

Թրթռաքարմաղ (PARS B.Sc)

B.Sc տեսակի քաղմադները կիրառվում են 2.0-63.0մմ բջջավոր ցանցերի վրա՝ 0-200.0մմ չափամասերով հատիկավոր նյութեր տեսակավորելու համար: Տեսակավորվող նյութ է համարվում քարը, ավազակոպճային խառնուրդը, հանքաքարը, ածուխը, կոքսը և այլ: B.Sc տեսակի քարմադների միջոցով նյութերը հնարավոր է տեսակավորել չոր և թաց տեսքով:

B.Sc տեսակի քաղմադը կատարում է չուղորդված էլիպսաձև շարժումներ: Շարժումներն առաջացնում է թրթռաշարժիչը, որը գտնվում է ագրեգատի ծանրության կենտրոնի վերևում: Արտադրվում են մեկ, երկու կամ երեք տեսակավորման հարթություններ ունեցող B.Sc տեսակի քաղմադներ: Տեսակավորման հարթությունները լինում են պողպատյա, ռետինե կամ պլաստիկ:

B.Sc թրթռաքարմադի առավելությունները.

- կայուն են տեսակավորման հարթակում տեսակավորվող նյութի լավելուն և կպչելուն
- նվազագույն շահագործման ծախսեր՝ ագրեգատի կառուցվածքի, քաղմադի շահագործման փորձի և տարրերի /դետալների/ միասնականացման կիրառման շնորհիվ
- նվազագույն շահագործման ծախսեր, ինչը իրագործելի է ագրեգատի հավասարակշռված կառուցվածքի և քաղմադի շահագործման երկարամյա արտադրական փորձի ու տարրերի /դետալների/ միասնականացման ներդրման հաշվին
- տեսակավորման հարթակների պարզ փոխարինում
- դիտաապակիների միջոցով տեսակավորման գործընթացի և տեսակավորման հարթակների վիճակի պարզ տեսողական հսկողություն:

B.Sc թրթռաքարմադի որակական հատկանիշները ապահովում են բարձր արդյունավետություն ու խնայողականություն:

Բեռնափոխակրիչ PARS Sc (թրթռասնիչ՝ մաղելու գործառույթով)


Բեռնափոխակրիչ Sc՝ թրթռափոխակրիչ է, որը նախատեսված է սորուն նյութերի հորիզոնական փոշեստվար փոխադրման համար, խոշոր ներխառնուկները

գատելու լրացուցիչ ֆունկցիայով: Sc բեռնափոխակրիչների տարբեր տեսակներ կիրառվում են որպես չոր նյութերի արտածող /կողմնատար/ փոխակրիչներ, ինչպես նաև որպես հում նյութերի թրթռական սնուցիչ՝ չոր շինարարական խառնուրդների արտադրության կայանքներում և կատալիզատորների արտադրության մեջ:

Սարքավորումի լրակազմը հնարավոր է փոխել, լրացնել կամ փոփոխել՝ արտադրության նոր նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Թրթռափոխակրիչն իրենից ներկայացնում է թրթռամեկուսիչ հենարանների վրա ազատ տատանվող ռեզոնանսային համակարգ, որը բաղկացած է փոխադրող փակ ճոռից և վերջինիս վրա ամրացված էլեկտրամեխանիկական թրթռիչներից, որոնց թեքության անկյունը կարգավորվում է: Ճոռին ամրացված բաժանարար ցանցը կատարում է խոշոր ներխառնուկների առանձնացման դեր, որոնք դուրս են բերվում հատուկ արտաթողման խողովակաուստի միջոցով:

Ստորև ներկայացվում է գլխավոր հատակագիծը՝



2.3.2. Նախագծի այլընտրանքները

Ջարդիչ կայանի աշխատանքները իրականացվելու են ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի, Ռանչպար բնակավայրի վարչական տարածքում:

Ջարդիչ կայանում աշխատելու են միջին հաշվով 10 մարդ, որոնք աշխատանքի են ընդունվելու տեղի բնակիչներից, ինչը հնարավորություն կտա մեղմացնելու սոցիալական բեռը: Բացի դրանից, նախաձեռնող ընկերությունը պարտավորվել է մասնակցել բնակավայրի տարածքում իրականացվելիք սոցիալ-տնտեսական ծրագրերին և դրամական միջոցներ ուղղել համայնքի բյուջե:

Քննարկենք գրոյական տարբերակը: Այս տարբերակը ընտրելիս ջարդիչ կայանը չի աշխատում: Ռելիեֆի խախտում, ինչպես նաև փոշու և վնասակար գազերի արտանետում օդային ավազան տեղի չի ունենալու, հողի, ջրի, մթնոլորտի ինչպես մարդու առողջությանը վնաս չի հասցվելու: Աշխատատեղեր չեն ստեղծվելու, սոցիալական խնդիրներ չեն լուծվելու: Հումքի պակասը բացասաբար կանրադառնա ճանապարհաշինության և քաղաքաշինության ծրագրերում:

Ջարդիչ կայանի տարածքի հողերը գյուղատնտեսական կամ արտադրական որևէ այլ գործունեության նպատակներով օգտագործելու պիտանիություն չունեն: Տուրիզմ կազմակերպելու որևէ նախադրյալ չկա:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ նախագծի գրոյական տարբերակի ընտրությունը նպատակահարմար չէ:

Այսպիսով՝ այն տարբերակը, որը ընտրվել է ամենաարդյունավետն է: Նախագիծը նկատելի դրական ազդեցություն կունենա ազդակիր համայնքի սոցիալական կյանքում:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել 03-081-0102-0013 կադաստրային ծածկագրով հողամասում որի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է: Հողամասը 64,3 հա է, որի միայն 5,0 հա վրա է նախատեսվում իրականացնել նախատեսվող գործունեությունը: Նախատեսվող տարածքում նախկինում այլ աշխատանքներ իրականացված չեն եղել և տեղանքը ռելիեֆային փոփոխության չի

ենթարկվել: Հարակից տարածքներում առկա են ավազի արդյունահանման տեղամասեր, որոնց մասին Ընկերությունը տվյալներ չունի:

Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը.

Հողային աշխատանքներ

Նախատեսվող քարի ջարդման կայանի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 12 շաբաթվա ընթացքում:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 12 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 7 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ – 3 մարդ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Հողագրունտյին աշխատանքներ՝

Հայցվող տարածքում հողաբուսաշերտը բացակայում է :

- Հանույթ՝ 220 խմ
- Հետլիցք՝ 170 խմ

Ավելցուկ հողագրունտը 50 խմ ընդհանուր ծավալով կօգտագործվի տարածքի հարթեցման և բարեկարգման աշխատանքներում:

Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

- a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{է.դ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 84 օր

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 10 \times 0.025) \times 84 = 24 \text{ խմ/շին. ժամ.}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 100 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

$$U_1 = 100 \times 0.0015 \times 84 = 12.6 \text{ խմ/շին. ժամ.}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 36.6 խմ/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրցան իրականացնելու նպատակով օգտագործվող ջուրը կմատակարարվի համապատասխան մեքենաներով պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Մասիս համայնքից:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ջարդիչ կայանի կառուցման և շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ՝

Համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 12x70*0.23=0.23կգ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 20 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

Այս թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ըստ ՀՀ Կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման, գնահատվում է


որպես «ցածր»: Այս տեսակի թափոնները շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու, քանի որ պարբերաբար տեղափոխվելու են Ռանչպար բնակավայրի աղբավայր: Աղբահանության նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների հետ կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Ելնելով այն հանգամանքից, որ տեղանքում լցակույտեր չեն առաջանալու ջարդիչ կայանը որպես թափոնի օբյեկտ չի համապատասխանում ՀՀ կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման հավելված N1-ի վտանգավորության դասակարգման «Ա» կատեգորիային:


4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4.1. Գտնվելու վայրը

Նախատեսվող ջարդիչ կայանը գտնվում է Ռանչպար գյուղից մոտ 1,1 կմ արևմուտք և Սիս գյուղից մոտ 3.1 կմ հարավ (Նկար 1,2): Տեղամասը Ռանչպար գյուղի հետ կապված է ասֆալտապատ ճանապարհով: Հարակից տարածքներում մշակովի այգիներ չկան, բնապահպանական պատմամշակույթային տարածքներ չկան: Ըստ հաստատված սանիտարական պաշտպանիչ գոտին մոտակա բնակելի տանից պետք է լինի ուղիղ գծով 300 մետր հեռավորության վրա:



ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻՇ
Մ 1:1000



		ՀՊ ԱՄԻՉ ԱՐԱՄԱՆ ԴԱՆԱՅԵ ԱՎԱԿԱ ԳՅՈՐԴ ՈՒՆԵՐՈՒՄ ԼՈՒ ԹԱՐԱՄԱԽ 1-ԻՆ ՑՈՐՈՑ 18 ՀԱՅԵՍՏԱՆԻ ԳՆԱԿԱԿՈՐԹՈՐ ԿԱՅՆԱԿԱՊՈՒՅՄԸ ԵՄԹՐՈՅՈՒՆ ԵՎԱԿԱՅԻՆ ԵՎԱԿԱՅԻՆ			
ԼՈՍ	ԷՒԵՏՐՈՒՅԱԼ	ՍՄՏԱՐԱԿԵՏԱԿԱԼ ԱՍՍ	ԹՈՒ	ԹԵՂ	ԹԵՐԵՐ
ՆԱԿԱԳԵՑ	ԷՒԵՏՐՈՒՅԱԼ		ՃԼ	-	-
ԱՏՈՐԳԵՑ	ՆՊԱԿԵՑԱԼ		 «ՇԻՆԵՍՈՐՆ» ՍՊԸ		
		ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻՇ Մ 1:1000			

Նկար 2

Սև ջուր /Մեծամոր/ գետից հեռավորությունը կազմում է 420մ, Արաքս գետից՝ 1200մ:
ՋՏԿ-ի տարածքի կոորդինատներն են Arm WGS-84 համակարգով՝

X	Y
1 - 8444658.7758	4433829.7672
2 - 8444665.1792	4433826.9393
3 - 8444664.0480	4433824.3780
4 - 8444657.6447	4433827.2059

Շրջանը ներառված է մեկ՝ չոր ցամաքային կլիմայական գոտում (նկար 7),
ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C):

Շրջանի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է +6°C-ից +12°C:
Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ:
Տեղումների առավելագույն քանակը 37մմ է (հունիս ամսին): Տասնօրյա

առավելագույն ձյան ծածկույթը կազմում է 35մմ: Անսառնամանիք օրերի թիվը՝ 150-200օր: Կայուն ձյան ծածկույթը գոյանում է դեկտեմբերի 15-ից և պահպանվում է մինչև մարտի 15-ը: Քամիների հիմնական ուղղություններն են հյուսիս, հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք: Անհողմությունները կազմում են 29%:

Ստորև 1-7 աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանը, քամիների, տեղումների վերաբերյալ (ըստ մոտակա Արտաշատ և Երևան «Էրեբունի» օդերևութաբանական կայանների տվյալների):

Աղյուսակ 1.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %


I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Արտաշատ կայան											
78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79
Երևան «Էրեբունի» կայան											
79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79

Աղյուսակ 2

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան C	Բացարձակ նվազագույն C	Բացարձակ մաքսիմալ C
Արտաշատ կայան														
-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	-29	43
Երևան «Էրեբունի» կայան														

-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	52.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42
------	------	-----	------	------	------	------	------	------	------	-----	------	------	-----	----



Նկար 3

Աղյուսակ 3.

Տեղումների քանակը ըստ ամիսների, մմ

Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջին
Արտաշատ կայան												
18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254
18	20	32	36	46	34	27	22	28	36	31	25	43
Երևան «Էրեբունի» կայան												
24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291
24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51

Աղյուսակ 4

Ձևաձևակազմ

Ձևաձևակազմ		
Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձևաձևակազմով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Արտաշատ կայան		
40	35	46
Երևան «Էրեբունի» կայան		
58	47	-

Աղյուսակ 5

Քամիներ

Միջին	Ամիսներ	Կրկնելիությունը, %	Մի ջին ամ	Մի ջին օր	Որ մե
-------	---------	--------------------	-----------	-----------	-------

տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա		Միջին արագությունը, մ/վ								11	12	13	
		Ուղղությունները											
		Հս	Հս- Արլ	Արլ	Հվ- Արլ	Հվ	Հվ- Արմ	Արմ	Հս- Արմ				
1	2	3	4	5	6	7	8	9	10				
Արտաշատ կայան													
920.2	Հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.4	7	
		1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.74				
	Ապրիլ	4	9	12	27	13	8	13	15	74			
		1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6				
	հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80			
		1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3				
	հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85			
		1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0				
Երևան «Էրեբունի» կայան													
912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1.5	
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7				
	Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45			1.9
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6				
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36			2.8
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3				
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63			1.0
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5				

Աղյուսակ 6

Արևափայլի տևողությունը, ժամ

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Արտաշատ կայան											
87	108	167	186	251	305	341	319	276	204	138	89

Աղյուսակ 7

Անարև օրերի քանակը, օր

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Արտաշատ կայան											
11	7	5	3	0.9	0.2	-	0.1	0.2	1	5	10

Մթնոլորտային օդ

Ջարդիչ կայանի տարածքում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգում ներառված մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան չկա:

2022 թվականի դեկտեմբերի վերջին այլ ընկերության պատվերով Ռանչպար գյուղի վարչական տարածքում կատարվել է մթնոլորտային օդի դիտարկում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. փոշի 0.076մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.0097մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.0033մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.12մգ/մ³:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» (ներկայումս՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն») ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, որտեղ ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը սովյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 8

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցետրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50-125	0.4	0.05	0.03	1.5
10-50	0.3	0.05	0.015	0.8
<10	0.2	0.02	0.008	0.4

Տեղամասի տարածքին մոտ գտնվող բնակավայրերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցամիջ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ³:

Բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները:

Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO₂ պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՍԹԿ պետք է կազմի 0.15մգ/մ³, միջին օրեկան ՍԹԿ՝ 0.05մգ/մ³:

Ջրային ռեսուրսներ

Ջարդիչ կայանի տարածքում խոշոր ջրագրական միավորները Արաքս և Սև ջուր (Մեծամոր) գետերն են: Սև ջուր գետը երիզում է հայցվող տեղամասը արևելքից և հյուսիսից, Արաքս գետի հունը անցնում է ջուրջ 1200մ հեռավորության վրա:

Սև ջուր գետը սկիզբ է առնում Մեծամոր լճից՝ 860մ բարձրությունից: Երկարությունը 38կմ է, ջրհավաք ավազանը՝ 480 կմ²: ՀՀ միակ գետն է, որն ունի հարթավայրային բնույթ (միջին թեքությունը՝ 1 մ/կմ) և ստորերկրյա սնում (93%): Հոսում է Արարատյան դաշտի ճահճապատ տեղանքներով: Տարեկան միջին ծախսը 33,9 մ³/վ է (Ռանչպար գ.): Ռանչպար դիտակետում Սև ջուր գետի հիդրոլոգիական բնութագրիչներն են.

Աղյուսակ 9

Գետ- դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Բազմամյա միջին տարեկան ելքը, մ ³ /վ	Հոսքի մոդուլը, լ/վ*կմ ²	Հոսքի շերտը, մմ	Հոսքի ծավալը, մլն.մ ³ /տ	Առավելագույն ելքը, մ ³ /վ	Նվազագույն ելքը, մ ³ /վ
Սև Ջուր- Ռանչպար	3540	24.3	6.88	217	768	152	5.70

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվում է Մեծամոր գետի ջրերի մոնիթորինգ: Նախարարության մասնագիտացված ստորաբաժանման պաշտոնական կայքում (<http://www.armmonitoring.am>) հրապարակված են 2022 թվականի 3-րդ եռամսյակում կատարված դիտարկումների արդյունքները : Մեծամոր գետի մշտադիտարկման ցանցը ներկայացված է ստորև, նկարներ 4-ում :

Ըստ 2022 թվականի 3-րդ եռամսյակի դիտարկման տվյալների, Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք օգոստոսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս) (նկար 6):

2022 թվականի դեկտեմբերին հայցվող տարածքի հարակից հատվածից կատարվել է Սև ջուր (Մեծամոր) գետի ջրերի նմուշարկում, որի արդյունքները տրամադրվում են աղյուսակ -ում:

Աղյուսակ 10


Ստորերկրյա ջրերի ավազանը	Աղբյուրների հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ	Հիմնական հորատանցքերի հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ
--------------------------	--	---

Արագոյայանի իջվածք		2138.9
Արտաշատի իջվածք	224.5	3056.7
Գայ-Հայկաշենի հանքավայր		5063.6
Հոկտեմբերյանի իջվածք	18436.6	31880.8
Սովետաշենի բարձրացում	3260.4	9601.8
Ընդամենը	21921.2	51741.8


Նկար 4



Նկար 5



Նկար 6



Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս):


ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):


ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին



Գծապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Արաքս գետ

Արաքս գետի 8 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատեստաակնան նորմերով գնահատման, գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, նիկելի, մոլիբդենի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները (Աղյուսակ 23):

Արաքս գետի 3 դիտակետում ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին իրականացվել են հասակային նստվածքների ուսումնասիրություններ: Հասակային նստվածքներում որոշված ցուցանիշների մի մասը բերված է Աղյուսակ 33-ում:



Աղյուսակ 8. Արաքս գետի ջրում որոշված ցուցանիշների տարեկան միջին կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից 2022 թվականին:

Դիտակետի տեղագրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)														
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0.39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0.024 մգN/լ	Մուգնա իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Նատրիում ՍԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0.001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0.001 մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0.01 մգ/լ	Մոլիբդեն, ՍԹԿ=0.5 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0.01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0.001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0.5 մգ/լ	Սլյուսին, ՍԹԿ=0.04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0.001 մգ/լ
0.9 կմ գ. Հուրազկերտից ներքև (25)	-	-	-	-	-	-	4.1	3.3	-	-	5.5	8.7	-	13.8	-
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	-	4.0	7.6	1.3	-	-	11.6	6.6	2.0	0.3	12.7	14.6	1.8	23.3	2.5
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	-	3.4	5.4	1.2	-	-	8.2	6.5	2.1	-	13.8	14.3	1.8	23.6	2.2
0.5 կմ ք. Արարատից ներքև (28)	-	-	2.6	-	-	-	13.7	7.5	3.3	-	20.7	15.8	2.7	38.0	1.9
2 կմ ք. Ազարակից հարավ ((29) AMS-1)	-	1.3	3.1	2.0	-	1.2	5.1	5.7	-	-	7.6	16.7	1.4	10.8	8.2
2.5 կմ ք. Ազարակից հարավ-արևելք ((30) AMS-2)	-	1.7	3.0	2.1	1.3	1.4	14.6	7.3	-	-	8.1	20.9	1.9	13.1	8.4
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	1.2	1.9	1.8	1.7	-	-	15.2	5.3	-	-	7.9	15.0	2.1	12.9	11.5
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	1.3	1.3	0.0	2.0	1.2	1.4	53.9	10.0	-	-	16.3	29.9	5.5	25.5	14.3

Աղյուսակ 9. Արաքս գետի հատակային նստվածքների մոնիթորինգի արդյունքները 2022 թվականին.

Կոնցենտրացիա, գ/կգ	Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)					Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)		Մեղրի գետի թափման կետից ներքև (AMS-3)			Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)				
	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Հունիս	Օգոստոս	Ապրիլ	Մայիս	Հունիս	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս
Ալյումին	0.0100	0.8284	0.1011	0.0188	2.2274	0.4396	1.8462	1.5852	3.4678	2.1259	1.4261	4.0270	2.3327	1.4649	26.8170
Էրկաթ	9.4914	16.2749	12.0314	3.3401	7.1380	19.0304	5.1883	18.5958	25.8315	19.3867	23.8421	51.0697	27.3613	12.5144	36.1179
Մանգան	0.8304	0.7907	0.2462	0.4621	0.6576	0.3664	0.5144	0.3046	0.1173	0.0494	0.3856	0.1644	0.1201	0.2682	0.4722
Նիկել	0.1889	0.1356	0.1407	0.1513	0.1456	0.1316	0.1568	0.0230	0.0071	0.0098	0.0875	0.0128	0.0750	0.0757	0.0963
Պղինձ	0.0524	0.0363	0.0407	0.0470	0.0527	0.5919	0.1771	0.8917	0.5697	0.8291	0.3515	0.7231	0.3274	0.4328	0.3753
Արսեն	0.0113	0.0119	0.0327	0.0135	0.0104	0.0386	0.0105	0.0091	0.0110	0.0244	0.0101	0.0210	0.0298	0.0109	0.0194
Մոլիբդեն	0.0012	0.0010	0.0012	0.0007	0.0009	0.0037	0.0063	0.0304	0.0423	0.0474	0.0459	0.0324	0.0400	0.0432	0.0308

Հավելված 1. ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
25	Արաքս	Ախուրյան	Արմավիր	0.9 կմ գ. Հուրազկերտից ներքև
Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
26	Արաքս	Հրազդան	Արարատ	Հրազդան գետի թափ. կետից վերև
27	Արաքս	Արարատյան	Արարատ	Հրազդան գետի թափ. կետից ներքև
28	Արաքս	Արարատյան	Արարատ	0.5 կմ ք. Արարատից ներքև
29 (AMS-1)	Արաքս	Հյուսիսային	Մյունիք	2 կմ ք. Ագարակից հարավ
30 (AMS-2)	Արաքս	Հյուսիսային	Մյունիք	2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք

Հողեր

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել 03-081-0102-0013 կադաստրային ծածկագրով հողամասում, որի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է: Տեղամասում նախկինում որևէ աշխատանքներ իրականացված չեն և հողամասը աղտոտված չէ: Ջարդիչ կայանի տեղամասի շրջանում զարգացած են մարզագետնաճահճային աղուտ-ալկալի, ոռոգելի խոնավ-մարզագետնային գորշ աղուտ-ալկալի և ոռոգելի մնացորդային մարզագետնային-գորշ խորքային-ձուլված հողերը (նկար 11):

Մարզագետնային գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների

բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր: Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում:


Այս տիպի հողերում հողագոյացող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5%:

Աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով:

Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է:

Բուն հայցվող տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Ավազակուտակի մակերևութային հատվածը ներկայացված է 0.15-0.25մ հզորությամբ (միջինը 0.17մ) ավազակավերով, որոնք համատարած ծածկում են ավազակոպիճներին:

ՇՐՋԱՆԻ ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մարգագետնաճահճային աղուտ-ալկալի կավավազային հողեր
- 2 - Ոռոգելի խոնավ-մարգագետնային-գորշ աղուտ-ալկալի կավային հողեր
- 3 - Ոռոգելի մնացորդային մարգագետնային-գորշ խորքային-ձուլված հողեր

Բուսական և կենդանական աշխարհ

Ջարդիչ կայանի տեղամասի շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում իհայտ եկած հալոֆիլ անապատային բուսատեսակներով (նկար):

Տեղամասում նշվել են օշան հավամբանման (*Salsola ericoides* Bieb.), սարսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum* Pall. Bieb), անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացողը (*Elytrigia repens*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*), օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), լվածադիկ արծաթատերևը (*Tanacetum argyrophyllum* C. Koch. Tzvel.), փշոտ կապարը (*Capparis spinosa*) և սովորական եղեգը (*Phragmites communis*), որն աճում է ջրերի հարևանությամբ՝ առավել խոնավ հատվածներում:

Հայցվող տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները. միկրոկեննում մարջանանման (*Microcnemum coralloides* (Loscos et Pardo) Font-Quer) – վտանգված տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքում՝ աղակալած ճահիճներում և աղուտներում, տեղամասից մոտ 6.5կմ հեռավորության վրա,

– հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica* Fomin) – վտանգված տեսակ, աճում է Միսյան և Մասիս գյուղերի շրջակայքում՝ տեղամասից 6.5-8.5կմ հեռավորության վրա,

– ջրահարս փոքր (*Najas minor* L.) – խոցելի տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 7կմ հեռավորության վրա,

– կղմուխ Օշեի (*Inula aucheriana* DC. (= *I. seidlitzii* Boiss.)) – վտանգված տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6.5-7.5կմ հեռավորության վրա,


– բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera* Bunge) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Մասիս գյուղի շրջակայքում, տեղամասից մոտ 6.5կմ հեռավորության վրա:

Խոշոր կաթնասուններ երևակման տարածքում չեն արձանագրվել: Տարածքում հայտնաբերվել են մանր կրծողներ, թռչուններ: Թռչուններից դիտարկվել է սովորական կաչաղակ և տնային ճնճող, մեծ քանակությամբ՝ սովորական դաշտամուկ:

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից Հարավ-արևմտյան տեղամասի շրջանում հայտնի են.

- Ուբադչի ճպուռ (*Gomphus ubadschii* Schmidt) – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Բուրաստան գյուղի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 11կմ հեռավորության վրա,
- Սիմպեկմա ճպուռ (*Sympecma paedisca*) – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արտաշատ քաղաքի շրջակայքում, հայցվող տեղամասից շուրջ 16կմ հեռավորության վրա,
- Վան Բրինկի նետիկ (*Coenagrion vanbrinkae* Lohmann) – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,

ՇՐՋԱՆԻ ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Անապատային հարթիլ բուսականություն

- Սնծովյան ճպուռ (Libellula pontica Selys) – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6-7կմ հեռավորության վրա,
- Անդրկովկասյան տակիրյան կլորագլուխ (Phrynocephalus orvathi) – խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ, հատնի է Արտաշատի տարածաշրջանի նոսր քսերոֆիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում,
- Փոքր ճագարամուկ (Phrynocephalus orvathi) - Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով, հայտնի է Արարատի մարզի կավային և խճաքարային կիսաանապատներում, աղուտներում և փոքր ավազուտներում (տակիրներ), չոր լեռնատափաստանի աղուտային և անապատացած բիոտոպներում, հաճախ աղուտային, ավելի հազվադեպ՝ օշինդրային բուսական խմբավորումներով:
- Աղավնաբազե (Falco columbarius Linnaeus) - հազվագյուտ, անհետացող, սակավաթիվ և քիչ ուսումնասիրված տեսակ է, Հայաստանում չվահյուր ք.Երևանի շրջակայքում և ձմեռող Հրազդանի շրջանում, երևակման տարածքից 14-ից 60կմ հեռավորության վրա:

Նախատեսվող տարածքում վերը նշված կենդանական տեսակները չեն դիտարկվել:

Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից տարածքներում : Արարատի մարզում, հայցվող տեղամասից ավելի քան 23կմ հեռավորության վրա, գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա

տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մեծ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարավանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (*Ursus arctos syriacus*), բեզարյան այծի (*Capra aegagrus*), կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսականեր, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Տեղամասից մոտ 30կմ հեռավարության վրա է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Համաձայն 2011 թ. մարտի 31-ի 324Ն որոշման «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի տարածքը կազմում է 95,99հա: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում (10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում): Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում

աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր: Էնդեմիկ ներկայացուցիչներից են *Salsola tamamschjanae*, *Acantholimon araxanum*: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար Էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ:

Զարդման կայանի տարածքից ավելի քան 20կմ հեռավորության վրա գտնվում է «Խոր Վիրապ» պետական արգելավայրը, որը հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50.28 հեկտար տարածքում խոնավ տարածքի Էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի Էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

- 1) «Խոր Վիրապ» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.
- 2) խոնավ տարածքի Էկոհամակարգի Էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.
- 3) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.
- 4) վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.
- 5) գիտաճանաչողական և Էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը:

Բնության հատուկ պահպանվող տարածք է համարվում նաև բնության հուշարձանը: ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ

տարածքի բնության հուշարձանների ցանկը, որոնք նույնպես հանդիսանում են բնության հատուկ պահպանվող տարածքներ:

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հուշարձանների ցանկը, ինչպես նաև դրանց գտնվելու վայրը ներկայացված է աղյուսակ -ում:

Աղյուսակ 11

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	«Անձավիկ» քարանձավ	Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 8 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2	«Դաշտաքար» քարանձավ	Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400մ բարձրության
3	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5	«Անանուն» անտիկլինալ ծալք	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8	«Հորթունի» բրածո ֆլորա	Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
11	«Աղակալած ճահճուտ»	քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Տեղամասի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Հայցվող տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Դաշտաքար» քարանձավն է, հեռավորությունը կազմում է մոտ 35կմ:

5. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ենթակառուցվածքներ

Նախատեսվող Ջարդիչ կայանի տարածքը տարածական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզում: 2022թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզի ընդհանուր տարածքը՝ 2090.03 ք.կմ է, ինչը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 7 %-ը: Համայնքների թիվը՝ 95, բնակավայրերի թիվը՝ 99:

Մարզն ունի շուրջ 256.6 հազար բնակչություն, որից 72.0 հազ. քաղաքաբնակներ են (28%), 184.6 հազարը՝ գյուղաբնակ (71%): Մարզը բնակչությամբ համարյա միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

Մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ Արարատ 20.4 հազար մարդ, Արտաշատ 19.3 հազար մարդ, Մասիս 20.6 հազար մարդ, Վեդի 11.8 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝ արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորզման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)

2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)

3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությանը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ -ում:

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Volume of produced production, in current prices ¹ , mln.drms	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Realisation of fabricated products in current prices ¹ , mln.drms	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of of industrial production, %	
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ARARAT MARZ				
Ամբողջ արդյունաբերությունը	301 033.5	327 001.2	98.7	Total industry
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	1 694.0	2 420.2	138.0	Mining and quarrying
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1 694.0	2 420.2	138.0	other mining and quarrying
Մշակող արդյունաբերություն	287 847.8	313 089.4	98.5	Manufacturing
<i>որից՝</i>				<i>of which :</i>
սննդամթերքի արտադրություն	48 796.9	48 236.1	118.3	manufacture of food products
խմիչքների արտադրություն	27 585.6	28 214.6	82.1	manufacture of beverages
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	69 105.1	68 774.8	86.6	manufacture of tobacco products
հագուստի արտադրություն	738.4	832.5	104.6	manufacture of wearing apparel
թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	18 376.7	18 579.5	87.0	manufacture of paper and paper products
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	346.0	345.7	119.3	manufacture of chemicals and chemical products
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	984.3	1 222.4	105.4	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	23 032.5	23 285.4	127.2	manufacture of other non-metallic mineral products
հիմնային մետաղների արտադրություն	96 833.8	121 717.2	102.5	manufacture of basic metals
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	10 012.8	10 012.8	101.0	Electricity, gas, steam, and air conditioning supply
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերանշակում	1 478.9	1 478.9	93.3	Water supply, sewerage, waste management and remediation activities

Գյուղատնտեսություն. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային

գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 7.6%-ը: կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31- են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 125.0լն.դրամ, որից բուսաբուծությունը՝ 94.0մլն. դրամ, անասնաբուծությունը՝ 31.0մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունը կազմել են 2568հա, միջին բերքատվությունը՝ 36.4g/հա, խամախառն բերքը՝ 9.6հազ.տ:

Կարտոֆիլի ցանքսատարածությունը կազմել են 508հա, միջին բերքատվությունը՝ 285.1g/հա, խամախառն բերքը՝ 14.5հազ.տ:

Բանջարանոցային մշակաբույսերի համար վերը նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 5110հա, 400.2g/հա և 227.1հազ.տ, բոստանային մշակաբույսերի համար՝ 981հա, 382.7g/հա և 37.5հազ.տ, պտղի և հատապտղի տարածությունների դեպքում՝ 8630հա, 104.3g/հա և 79.7հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 4849հա, միջին բերքատվությունը՝ 272.3g/հա, խամախառն բերքը՝ 123.7 հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 45.4 հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 14.4հազ.գլուխ, խոզեր 21.7հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 100.5հազ.գլուխ, ձիեր՝ 0.9հազ.գլուխ:

Իրականացվել է 24160.2 մլն.դրամի շինարարություն և 23114.1մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Հայցվող տարածքը գտնվում է Մասիս խոշորացված համայնքի Ռանչպար բնակավայրի սահմաններում:

Խոշորացված համայնքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ ափին: Հյուսիսից և արևելքից սահմանակից է մայրաքաղաք Երևանին, հյուսիս-արևմուտքից՝ Արմավիրի մարզի Փարաքար և Վաղարշապատ համայնքներին, հարավից և հարավ-արևելքից՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքին, արևմուտքից՝ Արմավիրի մարզի Արաքս համայնքին:

Բազմաբնակավայր համայնքը կազմավերվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Արարատի մարզում կայացած համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրությունների արդյունքում և միավորում է 27 բնակավայր:


Մասիս համայնքի բնակչությունը 01.01.2022թ. դրությամբ կազմում է 92623 մարդ: Ազգային առումով այն գրեթե միատարր է՝ հայեր 97.7%, եզդիներ 2.2%, ռուսներ 0.1%: Բնակչության ընդհանուր կազմում կանայք կազմում են 57.8%, տղամարդիկ՝ 42.2%:

Համայնքի տնային տնտեսությունները բաղկացած են 21800 ընտանիքից: Միջին հաշվով 1 տնային տնտեսությունը կազմված է 4 մարդուց:

Բնակչության կազմը ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ տեսքը.

- մինչև 18 տարեկան – 22231 մարդ (24%),
- 18-45 տարեկան – 36876 մարդ (40%),
- 45-63 տարեկան – 20505 մարդ (22%),
- 63 տարեկան և ավելի – 13011 մարդ (14%):

Համայնքի բնակչության սոցիալական կազմը ներկայացված է նկար 9-ում:



Մասիս համայնքում գործում են 26 նախադպրոցական, 33 հանրակրթական, 1 ավագ դպրոցներ և 1 քոլեջ: Մանկավարժական-կրթական հաստատությունների թվային բնութագրերը ներկայացված են աղյուսակ -ում:

Աղյուսակ 12

Անվանումը	Նախադպրոցական հաստատություններ	Միջնակարգ դպրոցներ	Հիմնական դպրոցներ	Ավագ դպրոց	Քոլեջ
Հաստատություններ	26	25	7	1	1
Ուսանողներ/ երեխաներ	2211	9395	2909	243	425
Մանկավարժներ/ դասախոսներ	542	1128	291	31	69
Տնօրեններ	26	25	7	1	1
Դասարաններ/ խմբեր	81	418	114	15	30
Գրադարաններ	-	25	7	1	1


Առողջապահական հաստատությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ -ում:

Աղյուսակ 13

Անվանումը	Բժշկական կենտրոն, Պոլիկլինիկա	Հիվանդանոց	ԱԱՊԿ	ԲՄԿ
Հաստատություններ	2	1	16	8
Բժիշկներ	86	5	24	2
Հզորությունը	110	40	366	59
Աշխատակազմ	192	18	88	10

Մասիս համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը կազմում է 616 (նկար):

Նկար 10




Համայնքի վարչական տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 16929.08 հա: Հողերի բաշխումը ըստ նպատակային նշանակությունների ներկայացված է աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 14

Հ/Հ	Հողատեսքը	Մակերեսը /հա/
1.	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից	9807,97
1.1	Վարելահող	5653,87
1.2	Բազմամյան տնկարկներ	374,27
1.3	Խոտհարք	354,94
1.4	Արոտ	1228,57
1.5	Այլ հողատեսք	2196,32
2.	Բնակավայրի հողեր, որից	3825,97
2.1	Բնակելի	2874,55
2.2	Հասարակական հողեր	215,20
2.3	Խառը կառուցապատման հողեր	16,14
2.4	Ընդհանուր օգտագործման հողեր	536,0
2.5	Բնակավայրի այլ հողեր	184,08
3.	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	959,17
4.	Էներգետիկայի, տրանսպորտի և կապի հողեր	329,46
5.	Հատուկ պահպանվող տարածքներ	101,20
6.	Հատուկ նշանակության հողեր	327,23
7.	Անտառային հողեր	0,29
8.	Ջրային	1577,81
Ընդամենը		16929,08
9.	Համայնքի սեփականություն հանդիսացող հողեր, որից	5143,89
9.1	տրված վարձակալության	2175,95

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի տեսակարար կշիռը ընդհանուր մեջ կազմում է 23% (նկար):

Համայնքային հողերի տեսակարար կշիռը



Ռանչպար բնակավայրում զբաղվում են անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Անասնապահական բնագավառում զբաղվում են խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների և թռչունների բուծմամբ:

Բանջարաբուստանային կուլտուրաներից աճեցնում են լոլիկ, տակդեղ, լոբի, սմբուկ, վաղահաս կարտոֆիլ: Զգալի տարածքներ են զբաղեցնում ջերմոցները:

Մեփականաշնորհված հողամասերում աճեցնում են գարնանացան գարի և առվույտ:

Բնակավայրում գործող երկհարկանի դպրոցը գտնվում է բարվոք վիճակում, սակայն սպորտ դահլիճը ունի վերանորոգման կարիք: Դպրոցը հազեցված է համակարգչային տեխնիկայով: Գործում է նաև նախակրթարան: Կամավոր սկզբունքով համայնքում գործում են պարի, ասեղնագործության, նկարչության խմբակներ: Գյուղի գրադարանն ունի 2588 գիրք:

Նախատեսվող ջարդիչ կայանը տեղակայված է լինելու արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողի վրա, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Զարդիչ կայանի աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են Ռանչպար բնակավայրի բնակիչներին: Քննարկվել է ծրագրավորվող

երկրաբանահետախուզական աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը:

Պատմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Ռանչպար բնակավայրում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

Հետևաբար, ջարդիչ կայանի տարածքում ծրագրավորվող աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանների իրավիճակի վրա:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ջարդիչ կայանի տարածքում աշխատանքերի իրականացման ընթացքում ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային օդ.

Օդային ավազանը ադոտոումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- Անձրևաջրերը ներծծվում են հողի մեջ, իսկ արտադրական հոսքաջրեր չեն առաջանալու:

Սև ջուր և Արաքս գետերից հեռավորությունները զգալի են /420մ և 1200մ/ և որևէ ազդեցություն չի ակնկալվում: Գարնանային վարարումների ժամանակ գետի ափերը առավելագույնը կարող են ողողել 20մ, իսկ հեռավորությունը կազմում է Սև ջրից 420մ, ուստի որևէ ազդեցություն չի ակնկալվում:

Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Շինարարական տեխնիկան կապասարկվի տարածքից դուրս մասնագիտացված կետերում,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:

Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում

հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հասվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Աղմուկ, թրթռումներ

Հայցվող տարածքում ծրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

ՋՏԿ-ի կառուցման և շահագործման տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը և բուն ջարդման գործընթացը:

Գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 65դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = LAէկվ - ՍLAհեռ - ՍLaէկր - ՍLAկանաչ բանաձևով, որտեղ՝ LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=65դԲԱ,

ՍLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ՍLAհեռ կազմում է 20դԲԱ,

ՍLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (ՋՏԿ-ի տարածք),

ՍLAէկր =10դԲԱ,

ՍLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով,

ՍLAկանաչ=5դԲԱ:

Աղմուկի մակարդակը գյուղի մոտ կկազմի՝

Laտար = LAէկվ - ՍLAհեռ - ՍLaէկր - ՍLAկանաչ = 65 - 20 - 10 - 5 = 30դԲԱ (նորման 45դԲԱ):

Գիշերային ժամերին աշխատանքներ չեն կատարվելու:

Տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա):

Թոթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ: ՋՏԿ-ի տարածքում գործարկվող մեքենաներից առաջացող թրթռումները չեն գերազանցելու 85դԲԱ մակարդակը:

Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:

Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղմուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):

Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում է մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ զենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Ջարդիչ կայանի տարածքում ՀՀ Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

- Ջարդիչ կայանի տարածքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

- Աշխատակիցների համար հատուկ դասընթացների կազմակերպում՝ շրջանում հայտնի ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ, վարքագծի կանոնների ներկայացում:

- Նախքան աշխատանքների սկիզբը՝ տարածքի տեղագնում թռչունների բների հայտնաբերման և տեղափոխման նպատակով: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել թռչնագետի մասնակցությամբ:

Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

- ✓ պետական մարմինների ծանուցում,
- ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
6. Սև ջուր ջրերի որակի մշտադիտարկում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 200 000 ՀՀ դրամ:

Կենսաբազմազանության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Մշտադիտարկման տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նաև աղյուսակ -ում:


Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 150.0 հազ.դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է ստորև նկար -ում:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	50000	50000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը	3x35000	50000

մեկ հաճախականությամբ;		
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	2x25000	50000
Սև ջուր վտակի ջրերի մոնիթորինգ		50000
Ամբողջ շինարարության համար		200000

Նկար 12



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ

		<p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>
	Թափոնների կառավարում	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով</p>

		<p>ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով;</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում և հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու

	լցակայաններում կամ սպասարկման կետերում				
Հողային աշխատանքներ	- Հանված հողագրունտները հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Մտուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Արարատի մարզի տարածքի պաշտոնական կայք
13. Մալիս խոշորացված համայնքի պաշտոնական կայք
- 14, СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
- 15, СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
- 16, Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
- 17, Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.